



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

01. 12. 2020 թ.

ՔՈԱՖ-ը շրջում է սարերը հանուն Հայաստանի ապագայի

ԵՐԵՎԱՆ - «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (**ՔՈԱՖ**) ամենամյա գալա երեկոն փոխարինվում է «**Շուռ տանք սարերը**» առցանց հեռարձակվող դրամահավաք-միջոցառմամբ: **Ղեկտնների 6-ին`** Երևանի ժամանակով **առավոտյան 5:00-ին**, ամբողջ աշխարհի հայերը հնարավորություն կունենան միանալու հեռարձակմանը, խորությամբ ճանաչելու ՔՈԱՖ-ի գործն ու անմիջապես մասնակցելու Հայաստանի գյուղերի առջև ծառայած խնդիրների լուծման ՔՈԱՖ-յան առաքելությանը:

Միջոցառման ընթացքում հանգանակված ամբողջ գումարն ուղղվելու է Արցախից տեղահանված և ՔՈԱՖ-ի շահառու համայնքներում ապաստանած ընտանիքների կեցության ապահովման ծրագրերին, ինչպես նաև ՔՈԱՖ-ի կրթական, առողջապահական, երեխայի և ընտանիքի ծառայությունների և տնտեսական ծրագրերին, որ իրագործվում են Հայաստանի շուրջ 60 գյուղական համայնքներում:

«ՔՈԱՖ-ը ոտք է դնում նոր` 2021 թվականի շատ ավելի պատրաստված և ավելի զորեղ` անկոտորում նպատակ ունենալով կառուցել կուռ հասարակություն: Մեր բոլոր ծրագրերը շարունակելու են ծառայել մեր առաքելությանը` զարգացած և հզոր երիտասարդների շնորհիվ շենացնելով Հայաստանի և Արցախի գյուղական համայնքները»,- նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանը**:

ՔՈԱՖ-ը 2020 թվականի բարդ մարտահրավերներին արձագանքել է մեծագույն պատասխանատվությամբ և հրատապության լրջագույն ընկալմամբ: Արցախի դեմ սանձազերծված պատերազմի հենց առաջին օրերից «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամն իր շահառու համայնքներում ապաստան է տրամադրել Արցախից տեղահանված շուրջ 500 հոգու` ապահովելով ամենօրյա սնունդ, կենցաղային առաջին անհրաժեշտության պարագաներ և հագուստ: Այժմ ՔՈԱՖ-ն աշխատում է նաև այդ ընտանիքներին հիմնադրամի երկարաժամկետ ծրագրերում ընդգրկելու ուղղությամբ` նրանց մատուցելով երեխայի և ընտանիքի ծառայություններ, նրանց ներառելով կրթական, առողջապահական և տնտեսական ծրագրերում:

«Շուռ տանք սարերը» առցանց դրամահավաք-միջոցառումը վարելու են Լուս Անջելեսի FOX 11 հեռուստաընկերության մեկնաբան և հաղորդավար **Արաքսյա Կարապետյանը** և ՔՈԱՖ-ի Զարգացման գծով տնօրեն **Հայկ Բոյաջյանը**: Դրամահավաքի վիրտուալ միջոցառման ընթացքում ելույթ կունենան երգչուհի **Իվետա Մուկուչյանը** և ջութակահար **Արա Մալիքյանը**, ինչպես նաև տաղանդավոր երիտասարդ երաժիշտներ Հայաստանից: Հատուկ ուղերձով



CHILDREN
OF ARMENIA
FUND

հանդես կգան դերասանուհի **Անդրեա Մարտինը**, **Վիկտոր Գարբերը**,
երաժիշտ **Սերժ Թանկյանը** և ուրիշներ:

Դրամահավաք-միջոցառմանը հնարավոր է հետևել www.coafgives.org կայքում: Այս տարի
առաջին անգամ այն հեռարձակվելու է նաև ԱՄՆ-ի **USArmenia** և **ARTN**
հեռուստաընկերությունների արբանյակային ալիքներով:

Միջոցառման ընթացքում նաև հարգանքի տուրք կմատուցվի ՔՈԱՖ-ի համայնքների հերոս
զինվորներին, ովքեր արցախյան 44-օրյա պատերազմում կյանքը նվիրաբերել են հայրենիքի
պաշտպանությանը:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն
է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային
զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի
իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական,
առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են
համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի
շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի
մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը
կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում
շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի
մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է
2018 թ. մայիսի 27-ին: